Բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրակա-նացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով համապատասխան պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է:

Մաքսային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանք-ների դիմաց բնապահպանական վճարները գանձվում են՝

- վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար
- շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար:

Բնապահպանական վճարը մաքսային մարմնի կողմից հաշվարկվում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է գանձվում.
1)այլ պետություններում հաշվառված Հայաստանի Հանրապետություն մուտք գործող կամ շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց՝ ըստ ավտոմեքենայի տեսակի և բեռնատարողության հետևյալ դրույքաչափերով.

| ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԸՍՏ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԻ | ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ԴՐԱՄ) | |
|---|---|---|---|
| | | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՆԱՇ ԳԱԶԵՐՈՒՄ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐ (ԱԾԽԱԾՆԻ ՕՔՍԻԴԻ, ԱԾԽԱՔԱՐԱԾԻՆՆԵՐԻ, ԾԽԱՑՆՈՒԹՅԱՆ)ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ | |
| | | ՆՈՐՄԱՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ | ՆՈՐՄԱՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԱՎԵԼԻ՝ ՎԵՐՈԳՐՑԱԼ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԱՌՆՎԱԶ ՄԵԿԻ ԳԾՈՎ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ |
| 8703 21-8703 33 | մարդատար ավտոմեքենաներ՝ նախատեսված 10 և ավելի մարդ (ներառյալ վարորդը) տեղափոխելու համար, բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների | 3 750 | 7 500 |
| 8702 | մարդատար ավտոմեքենաներ՝ նախատեսված 10 և ավելի մարդ (ներառյալ վարորդը) տեղափոխելու համար, բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների | 10 000 | 20 000 |
| 8704 21<br>8704 31 | բեռների փոխադրման համար՝ 5 տոննայից ոչ ավելի առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ | 5 000 | 10 000 |
| 8704 22<br>8704 32 | բեռների փոխադրման համար՝ 5 տոննայից ավելի, բայց ոչ ավելի, քան 20 տոննա առավելագույն զանգվածով շարժիչավոր | 10 000 | 20 000 |

| | | | |
|---|---|---|---|
| | տրանսպորտային միջոցներ | | |
| 8704 23 | բեռների փոխադրման համար՝ 20 տոննայից ավելի առավելագույն զանգվածով շարժիչավոր տրանսպորտային միջոցներ | 15 000 | 30 000 |

2) Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման համար Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է այդ ապրանքների մաքսային արժեքից՝ «Բնապահպանական վճարի դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հետևյալ դրույքաչափերով.

| ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԸՍՏ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԻ | ԱՊՐԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ | |
|---|---|---|---|
| | | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՏՈԿՈՍՈՎ | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԵՎ ԻՐԱՑՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԴՐԱՆՑ ԻՐԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ, ՏՈԿՈՍՈՎ |
| 3215 11 00 8702, 8703, 8704, 8705 | հինգ տարուց ավելի մինչև 10 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների) | 2.0 | x |
| 8702, 8703, 8704, 8705 | 10 տարուց ավելի մինչև 15 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների) | 10.0 | x |
| 3215 11 00 8702, 8703, 8704, 8705 | 15 տարուց ավելի թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 ծածկագրով դասակարգվող տրանսպորտային միջոցների) | 20.0 | x |

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից Հայաստանի Հանրապետության օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար վճարը վճարվում է Հայաստանի Հանրապետության տարածք դրանց մուտք գործելու պահին:

Շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծվող ապրանքների համար վճարը վճարվում է մինչև դրանց մաքսային ձևակերպումը կամ մաքսային ձևակերպման ժամանակ: